



Համարը N 361-Ն
 Տիպը Որոշում
 Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2003.04.30/23(258) Հոդ. 380
 Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
 Ստորագրող մարմինը ՀՀ Վարչապետ
 Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ
 Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.05.2003

Տեսակը Մայր
 Կարգավիճակը Գործում է
 Ընդունման վայրը Երևան
 Ընդունման ամսաթիվը 27.02.2003
 Ստորագրման ամսաթիվը 09.04.2003
 Վավերացման ամսաթիվը 17.04.2003
 Ուժը կորցնելու ամսաթիվը

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱԳԻ» ԿՐԹԱՀԱՄԱԿԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱԿՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՒՄԻ 25-Ի N 1392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
 Հայաստանի Հանրապետության
 Նախագահ Ռ. Քոչարյան
 17 սպրիլի 2003 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2003 թվականի N 361-Ն

«ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱԳԻ» ԿՐԹԱՀԱՄԱԿԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱԿՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՒՄԻ 25-Ի N 1392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Երևանի «Մխիթար Սերաստացի» կրթահամալիր» պետական ձեռնարկությունը վերակազմավորման ձևով վերակազմակերպել «Երևանի «Մխիթար Սերաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության:
2. Երևանի «Մխիթար Սերաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան ու նպատակը նախադպրոցական, հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, ինչպես նաև լրացուցիչ կրթական բնույթի գործունեության իրականացումն է:
3. Թույլատրել «Երևանի «Մխիթար Սերաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝
 - ա) լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում.
 - բ) արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.
 - գ) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում.
 - դ) մասնագիտական ուսուցման դասընթացների կազմակերպում.
 - ե) սովորողների ուսումնասիրտադրական գործունեություն և սպասարկման ծառայությունների իրականացում.
 - զ) սովորողների հանրային սննդի կազմակերպում.
 - է) մշակութային գործունեության իրականացում:
4. Սահմանել, որ
 - ա) «Երևանի «Մխիթար Սերաստացի» կրթահամալիր» պետական ձեռնարկության վերակազմակերպման պահին դրա տնօրինության՝ պետական սեփականություն հանդիսացող գույքը՝ իր ամբողջ կազմով և արժեքով, բացառությամբ շենքերի, շինությունների, պատմամշակութային նշանակության, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով հանձնվում է «Երևանի «Մխիթար Սերաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությանը.
 - բ) «Երևանի «Մխիթար Սերաստացի» կրթահամալիր» պետական ձեռնարկության տնօրինության շենքերը, շինությունները, պատմամշակութային նշանակության, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքը՝ իր ամբողջ կազմով և արժեքով, «Երևանի «Մխիթար Սերաստացի» կրթահամալիր»

պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացվում է անհատույց օգտագործման իրավունքով՝ դրա նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման նախարարության հետ կնքվելիք պայմանագրի հիման վրա:

5. «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ կետի «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

6. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ մեկամսյա ժամկետում հաստատել «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 1996 թվականի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1392-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

որոշման NN 1 և 2 հավելվածների՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության դպրոցների ցանկերից հանել 4-րդ կետերը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2003 թ. ապրիլի 9
Երևան